Թ. ՏԱՐԻ 2643 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 5 ՏՐԷ 4385 — 13 ՆՈՅԵՄԲԵՐ 1892 — 6 ՃԷՄԱԶԻԼ ԷՎՎԷԼ 1310 — ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՃԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Կ. Պոլիս

درعلیه ده غلطه ده آروره‌لك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳՐԻՐ

Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան ոսկեղծակ արժէք	150
» » Վեցամսեայ » »	75
» » Եռամսեայ » »	40
Օտար երկիրներէ Տարեկան Ֆրանկ	56
» » Վեցամսեայ »	28
Ընտիր թուղթի վրայ մասնաւոր տպագր. Տարեկան Օսմ. Ոսկի	2
Գաւառաց թղթատարի ծախքը վիճակաւոր	Դրուշ 50

Խմբագրութեանս ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՆՈՅԵՄԲ. 13/25 1892

ԳՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ

500 ԱՄԵԱԿ ՇԻՆՈՒԹԵԱՆ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՅՈՑ ՂԱԼԱԹԻՈՅ

Պատմական հարց մը

Երբ չինուած է Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցին։

Այդ հինաւուրց հոյակապ տաճարին դրան վրայ սա հնագոյն յիշատակարանը կը կարդանք.

«Ի սկզբան կառուցաւ սուրբ Տաճարս «յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մե«ծոյ. ի հայրապետութեան Հայոց Տէր Թեո«դորոսի Սրբազան կաթուղիկոսի և ի Պատ«րիարքութեան սրբոյ Երուսաղէմի Տէր Ե«ղիայեայ Արքեպիսկոպոսի առաջնոյ. գնեալ «տեղիս սրբոյ Տաճարին ի ձենովացւոց «Կոմս անուն բարեպաշտ վաճառականի «Քէֆէ քաղաքի Ղբրումս. յամի տեառն «1436»։

Ի՞նչ հասկացանք.— Կոմս անուն վաճառական մը, որ Խրիմու Քէֆէ քաղաքէն է եղեր, այս տաճարին գետինը ծախու է առեր ձենովացիներէն և տաճարն կառուցուեր է ի սկզբան՝ յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչին՝ Թէոդորոս կաթուղիկոսի Հայրապետութեան և Երուսաղէմի Եսայի առաջին Պատրիարքի պատրիարքութեան օրով, 1436 թուականին։

Ուրեմն, 1892—1436=456 տարի է, յորմէ հետէ կառուցուեր է այդ եկեղեցին. այնպէս չհաւատացուիր։ Բայց քննենք։ Նախ այդ արձանագրութեան մէջ յիշատակեալ Թէոդորոս կաթուղիկոսէն սկսինք։

Ո՞ր Թէոդորոսն է այդ. վասն զի այս անուն երկու կաթուղիկոս ունեցած ենք Ս. Լուսաւորչի աթոռոյն վրայ։

Թէոդորոս Ա., որ նստած է Մաղթամար, յամի Տեառն 926, երբ հայրապետական աթոռն հոն փոխադրուած էր և իր իշխանութիւնը տեւած է 10 տարի և 4 ամիս։ Ասոր ժամանակակից Երուսաղէմի Պատրիարքին ով ըլլալը չի գիտցուիր, վասն զի 909 թուականէն մինչեւ 981՝ Սրբոյ Յակոբեանց աթոռոյն գահակալք անծանօթ կը մնան (1), բացի Յովհաննէս անուն Պատրիարք մը (2), որ 969ին այրած է Ս. Յարութեան տաճարին մէջ (3)։ Ուրեմն, Ղալաթիոյ Եկեղեցւոյ արձանագրութեան յիշած կաթողիկոսը Թէոդորոս Ա.ը չէ։

Թէոդորոս Բ., որ նստած է ի Սիս Կիլիկիոյ, յամի Տեառն 1378, երբ հայրապետական աթոռն հոն փոխադրուած էր, և յետ ժամանակաց, նահատակուած է հանդերձ տասն և վեց պարոններով՝ 1389ի միջոցներն։

Այդ դէպք ո՛ր տարւոյն մէջ կատարուեցաւ, ճշդիւ չի գիտցուիր, միայն թէ Թէոդորոս Բ.ի յաջորդն՝ Կարապետ Ա.՝ 1394ին կաթուղիկոս էր արդէն, թէեւ Զամչեան՝ Կարապետ Ա.ոյ հայրապետութեան առաջին տարի կը նշանակէ 1396 թուականն (4)։

Մեր այդ ըսածն հաստատենք՝ յառաջ բերելով վերջին տարիներս հրատարակուած յիշատակարան մը, որ անշուշտ անծանօթ մնացած էր Զամչեանին։

«Գրեցաւ սակաւ գիրս ի հռչակաւոր «ճանապարհն Լեռնակողման (7) որ յանուն «Ս. Յովհաննու կարապետի, ի թուին ՊԼԹ «(1390) Յունիս 10ին, ձեռամբ Ստեփան«նոսի, յեպիսկոպոսութեան Ս. Երուսաղէմի «Տէր Գրիգորի Մարգարեայ (8)»։

Ուրեմն, քանի որ Գրիգոր Դ. 1390 տարւոյ վեցերորդ ամսուն դեռ Պատրիարք էր, իր մահէն նոյն տարւոյ երկրորդ կիսուն մէջ միայն կրնայ տեղի ունեցած ըլլալ, որով 1390 տարին չկրնար իր յաջորդին Եսայի Բ.ի վերագրուիր։

* * *

Հարցում Կ. Պոլսոյ Հայ Գաղութականներեն

Ուրեմն, քանի որ Թէոդորոս անուն կաթողիկոսի մը հայրապետութեան և Եսայի անուն Երուսաղէմի Պատրիարքի մը պատրիարքութեան օրով կառուցուեր է այդ եկեղեցին,

Քանի որ պատմութեամբ հաստատեցինք թէ դեռեւս Լէր պատահած է ժամանակի միջոց մը, յորում Թէոդորոս անուն Հայրապետի մը հետ Եսայի անուն Երուսաղէմի Պատրիարք մը նստեցած ենք,

Քանի որ հաստատեցինք նոյնպէս թէ այդ Թէոդորոս Հայրապետն Թէոդորոս Բ.ն է և Պատրիարքն Եսայի Բ.,

Քանի որ Եսայի Բ.ի պատրիարքական իշխանութիւնն կը տեւէ 1391 տարիէն և Թէոդորոս Բ.ի հայրապետական իշխանութիւնն կը վերջանայ 1393 տարիով,

Զարմանալ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ պէտնական շինութիւնն, այն է հիմնարկութիւնն, որեղ «ռեցած է 1391, 92 և 93 տարիներուն մէջ (9)։

Կը մնայ քննել 1. թէ այդ եկեղեցւոյ յիշատակարանն ի՞նչ պատճառաւ փոխանակ այդ թուականներու մին կրելու՝ 1436 թուականն կը կրէ. 2. թէ Երուսաղէմի Եսայի Բ. Պատրիարքն ի՞նչ պատճառաւ Ա՜ՆՈՒՆ կը յիշուի։

Եկեղեցւոյ հիմնարկութեան թուականի մասին մեր կատարած քննութեան արդիւնքը դիւրաւ մակաբերել կուտայ; կարծենք, թէ 1436 թուականն ցոյց կուտայ այն տարին յորում՝ յետ ժամանակաց գետեղուեր է այդ յիշատակարանն։ Միթէ այդ պարագայն չի՞ յիշեցներ յիշատակարանին առաջին բառն ։ «ԿԷՍ» (կառուցաւ...)։

Իսկ գալով Եսայի Բ.ի ՈՒՆՈՒԼՈՒՆ, ահա մեր կարծիքն այս մասին։ Ի հնումն սովորութիւն չկար այս ինչ կամ այն ինչ Հայրապետի կամ Պատրիարքի իւր հանանուանց կարգին մէջ քանիերորդ ըլլալը նշանակել յիշատակարանաց կամ արձանագրութեանց մէջ։ բաւական կը համարուէր միայն գրել, օրինակի համար, «ի թուականութեան Հայոց Զ.», ի հայրապետութեան Տէր Գրիգորի կաթողիկոսի եւն.», և մենք այժմ թուականէն միայն կը ընենք գիտնալ թէ այդ կաթողիկոսն է Գրիգոր Ժ. Զալարբէկեանց Մակուեցին։

Բայց այդ յիշատակարանը պատրաստողը եթէ կարեւոր դատած էին գիտցնել թէ Թէոդորոս կաթուղիկոսի ժամանակակից Եսայի Պատրիարքէն առաջ համանուն Պատրիարք մը չունէինք, ոչ նուազ կարեւոր պէտք էր դատէին գիտցնել նաեւ թէ Թէոդոս կաթուղիկոսէն առաջ ալ նոյնանուն կաթուղիկոս չունէինք կամ ունէինք։

Ապահով եղիր թէ Եսայեայ համար ՈՒՆՈՒՆ չկրնան ըսէին եթէ նոյն իսկ 1436 թուականին՝ այն է այդ յիշատակարանի գետեղուած տարին՝ ալ երուսաղեմի Պատրիարք եղող Եսային (Գ. չէ, այլ անկէ ՈՒՆՈՒՆ, որ է Բ.)։

Կարծենք հաստատեցինք թէ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ շինութիւնը տեղի ունեցած է 1391, 92 և 93 տարիներու մէջ։ ուրեմն, այդ երեք թուականներու միջին առնլով, կ'ըսենք այժմ թէ ներկայ 1892 տարին այդ եկեղեցւոյ շինութեան 500րդ տարին է։

Ասուած, որոյ անունն ամբողջ հինգ դարերէ ի վեր անընդհատ կը փառաբանուի այս Ս. Տաճարին մէջ, չէն եւ հաստատ պահէ զայն, բարեխօսութեամբ իւր բազմաչարչար վկայն Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին։ և «երգ օրհնութեան և ձայն Սաղմոսաց «և լուցումն լապտերաց և բուրումն ա«ռնուշահոտ խնկոցն մի պակասեսցի ի «ամենեւին մինչև ի կատարած աշխարհի»։(1)

Ե. Թոնիկեան

(1) Այդպէս կը մաղթէր այդ եկեղեցւոյ շինութենէն 57 տարի առաջ ապրող Մանուէլ անուն գրիչ մը սրբազարդի մը համար։

(1). Յաջորդութիւնք Պատրիարքացն Երուսաղէմի. էջ 34։

(2). Հայ թէ օտարազգի յայտնի չէ։

(3). Պատմ. Երուսաղէմի. տպեալ յԵրուսաղէմ 1890. Հատոր Ա. էջ 120։

(4). Պատմ. Զամչեանի. Հատոր Գ. Ժամանակագրական աղիւսակ։

(5) Թորոս Աղբար Դեր. Գարեգին Եպ. Սրուանձտեանցի, Հատոր Բ. էջ 368։

(6) Սարեւ պիտի քննենք թէ ի՞նչ պատճառաւ «առաջին» ըսուած է Ղալաթիոյ Եկեղեցւոյ Յիշատակարանին մէջ։

(7) Երուսաղէմի արեւմտեան կողմն, Յովհաննու Մկրտչի ծնած գիւղը, Զաքարիայի և Եղիսաբեթի տունն հռչակաւոր Վանք մ'էր Հայոց. մինչև ԺԶ. դարու սկիզբներն ունէինք հոն միաբանութիւն. այժմ Լատինաց ձեռքն է։

(8) Պատմ. Երուս. տպ. յԵրսղմ. 1890, Հատոր Ա., էջ 215։

(9) Կ. Պոլսոյ առումէն (1453)՝ 62—64 տարի առաջ և ո՛չ թէ 17—18 տարի յառաջ, ինչպէս կը կարծուէր ցարդ։

ԲԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ.—Պիզմարք իշխանի յայտարարութիւնը, զոր լրագրոյս երեկի թուով նշանակեցինք, 1870ի պատերազմին ծագման պարագայից վրայ, բովանդակ եւրոպեան մամուլն զբաղեցնող գլխաւոր դէպքերէն մին է այս օրերս։ Զի իրաւունք կուտայ Ֆրանսացիներուն, որք կ'ըսէին միշտ թէ 1870ին թէպէտ Նաբոլէոն Գ. պատերազմ յայտարարեց, բայց Պիզմարք էր որ ամէն բան ըրաւ որպէս զի Ֆրանսա ամօթապարտ չմնայու համար՝ պատերազմի յայտարարութեան դիմէր։ (*)

1870 Յուլիս 13ին Կոմս Պիզմարք, արտաքին գործոց նախարար Բրուսիոյ, հեռեւեալ շրջաբերականն հեռագրած էր բրուսական դեսպաններուն, և հրատարակեցուց Նոր Տեսչէ Ազիմանի Զայտունգի մէջ, ձրիապէս բաշխած էր ժողովրդեան, մի կողմէ Գերմանաց և միւս կողմէ Ֆրանսայոյց հայրենասիրական զգացումները գրգռելու և իրարու բախել տալու մտօք.—

«Հոհենձոլլերն իշխանին (Սպանիոյ գահէն) ետ կենալուն լուրը Մատրիտի կառավարութեան կողմէ Ֆրանսական կառավարութեան պաշտօնապէս հաղորդուելէ յետոյ, Ֆրանսայի դեսպանն ի Պերլին (կոմս Պէնէտէդզի) Բրուսիոյ թագաւորէն արտօնութիւն պահանջեց՝ ի Փարիզ հեռագրելու թէ Վեհ. Թագաւորը (Վիլհէլմ Ա.) ցմիչտ կը խոստանայ երբեք հաւանութիւն չտալ՝ եթէ Հոհենձոլլերներնեանք վերստին թեկնածու հանդիսանան Սպանիոյ գահուն։ Ասոր վրայ, Վեհ. Թագաւորը չուզեց ընդունիլ Ֆրանսայի դեսպանն, և իւր թիկնապահին ձեռամբ ըսել տուաւ անոր թէ Ն. Վեհափառութիւն այլ եւս բան մը չունի հաղորդելիք դեսպանին։»

Եւ սակայն, տարբեր պարունակութիւն ունի եղեր այն զեկուցագիր զոր Վիլհէլմ թագաւորին թիկնապահ Ռաթիվիլ իշխան Էմսէ (ուր էր թագաւորն) հաղորդած էր Պիզմարք կոմսին։ Ահա իսկական զեկուցագիրը.

«Կոմս Պէնէտէդզի այս առաւօտ թագաւորին հետ խօսակցութիւն մ'ունեցաւ, յետ որոյ թիկնապահ մը զրկուեցաւ Ֆրանսայի գործակատարին՝ ըսելու համար թէ Հոհենձոլլերն իշխան գլուխորդաբար հաստատած է թագաւորին՝ իւր որդւոյն Սպանիոյ գահէն հրաժարումը։ Կոմս Պէնէտէդզի յայտարարեց թէ թագաւորին հետ իւր տեսակցութենէն ետքը Ֆրանսայի արտաքին գործոց նախարար կոմսն դքսէն նոր հեռագիր մը ստացած է, որով իրեն կը յանձնուի նորէն տեսակցութիւն մը խնդրել թագաւորէն, որպէս զի թագաւորն (Ա.) ինքնին հաւանութիւն յայտնէ Հոհենձոլլերն իշխանին Սպանիոյ գահէն հրաժարման, և (Բ.) Հաւատաքը ընծայէ թէ այսպիսի թեկնածութիւն մը յապագային չպիտի կրկնուի։ Թագաւորն իւր թիկնապահն անգամ մ'ևս կոմս Պէնէտէդզիի մօտ զրկեց՝ ծանուցանելու համար նմա թէ ինք բացարձակապէս կը հաւանի Հոհենձոլլերն իշխանին Սպանիոյ գահէն հրաժարման։ Գալով երկրորդ կէտին, թագաւորը կը յիշեցնէ ինչ որ առտուն ըսած էր Պէնէտէդզի կոմսին։ Բայց Պէնէտէդզի նոր տեսակցութիւն մը խնդրեց։ Ասոր վրայ, Ն. Վեհափառութիւն գիս երրորդ անգամ Պէնէտէդզի կոմսին քով զրկեց, ը կը ճաչէր դէպ ի ժամ 6ին երեկոյեան, պատասխանելու համար անոր թէ Ն. Վեհափառութիւն չուզեր նոր վիճաբանութեանց մէջ մտնել ապագայի մասին պարտաւորիչ յայտարարութեանց համար։ առտուն ըսածն իւր վերջին բառն է այս գործին վերաբերեալ, և պարզապէս նոյնը կը յիշեցնէ։ Ասոր վրայ, Պէնէտէդզի յայտարարեց թէ թագաւորին այս խօսքը գոհացուցիչ կը գտնէ իւր մասին։»

«Ֆրանսական դեսպանը գոհ մնաց» ըսելն ո՛ւր, ինչպէս Վիլհէլմ թագաւոր կ'ելնացնէր Պիզմարք կոմսին, «թագաւորը Ֆրանսայի դեսպանը վռնտեց» ըսելն ո՛ւր։ Մոլթքէ որ թէ՛ առաջին և թէ երկրորդ զեկուցագրերուն բնագրերը տեսած էր, կ'ըսէր թէ «Վիլհէլմ թագաւորին գրել տուածը «կրակը դադրեցնելու փղշ» էր, իսկ Պիզմարք կոմսին գրել տուածը՝ «կրակն սկսելու փղշ»։ Հիմա Պիզմարք ինք կը խոստովանի, երկու խմբագրերու հետ իւր խօսակցութեան առթիւ, թէ Մոլթքէ կոմսին հետ համամտութեամբ՝ ինք 1870ին պատերազմն անհրաժեշտ կը նկատէր, գերման ազգին միութիւնը վերջապէս ի դլուխ հանելու և Ֆրանսական դասակարգութեան խիստ դաս մը տալու համար։ Եւ այս բաւական եղաւ Էմսէ Վիլհէլմ թագաւորին առ ինքն զրկած զեկուցագրոյն «մէկ փոքրիկ սրբագրութիւնը»։

Բայց այն «փոքրիկ սրբագրութիւն» 1870—71 ի պատերազմին անհաշուելի աղէտները պատճառեց, Ֆրանսական և գերմանական ազգերն անհաշտ թշնամի ըրաւ, և ցայսօր իսկ Եւրոպան յարաճուն սպառազինութեանց անվերջանալի չարիքներուն կը մատնէ։

Ֆրանսական մամուլը միահամուռ հրաւէր կը կարդայ եւրոպեան ուրիշ մամուլներուն՝ խոստովանելու թէ՝ Պիզմարքի այս յայտնութենէն ետեւ՝ օտար լրագիրք խաբուած էին 1870էն ի վեր։ թէ նոյն պատերազմին բուն չարժառիթն եղած էր Պիզմարք՝ Գերմանիոյ մեծութեան համար, և թէ՝ այն մաքիավելեան հնարքներէն ետեւ՝ 1870ին ուրիշ ճար չէր մնար Ֆրանսայի բայց եթէ պատերազմ հրատարակել,

(*)։ Վէհին չարժառիթը կը յիշուի։ Հոհենձոլլերնեան իշխան մը Սպանիոյ առժամանակեայ կառավարութեան կողմէ ընտրելի հռչակուած էր Սպանիոյ թագաւորութեան, որ թափուր էր այն ատեն։ Ֆրանսա բողոքեց։ Բրուսիոյ Վիլհէլմ թագաւորին հաւանութեամբ, յիշեալ Հոհենձոլլերնեան իշխանը վերծեց Սպանիոյ թագաւորութիւնը։ Ֆրանսա ապահովութիւն պահանջեց թէ այսպիսի թեկնածութիւն ուրիշ անգամ չպիտի պատահի։

—(178)—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՌ

ՍԱՆՏՐԻՅԵՈՆ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԾԻԱԾԱՆԸ

Կապրիէլ մտիկ կ'ընէր, առանց կարեւոր պատասխանելու։ Զայնը չէր երներ։ Բայց իր ակնարկն ի՞նչ պերճախօս կերպով կ'արտայայտէր իր տպաւորութիւններն ու հոգւոյն զգացումները։

—Վաղը, Կապրիէլ, նոր ուրախութիւն մը պիտի ունենաք, որուն պիտի մասնակցինք սրտապատար... վաղը, ձեր հայրն ու ձեր եղբայրը հոս, Մոնտրաժէի զղեակը պիտի գան։

—Հա՛յրս, եղբա՛յրս, բացագանչեց Կապրիէլ։

—Մառի-Մատրլէնը տեսնել կուգան և ամենեւին չեն սպասեր զձեզ վերատեսնելու երանութեան, վասնզի անոնք այ մեռած կը կարծեն զձեզ։

—Դիտեմ, և գիտեմ նաեւ որ շատ լացած են վրաս։

—Միշտ կուլան ու կը ցաւին վրադ։ Ա՛հ, Կապրիէլ, շատ երջանիկ պիտի ըլլան։

Կապրիէլ գլուխը մեղմով դրաւ աղջկանը ուսին վրայ և սկսաւ հեծկլտալ։

—Մայրս, սիրեցեալ մայրս, գոչեց Մառի-Մատրլէն, ա՛յ մի՛ լար և մանաւանդ ա՛յ մի՛ մտածեր սոսկալի անցեալին վրայ։ Ժօրժ և ես այնքան խնամքով, այնքան գորովով պիտի շրջապատենք զքեզ որ պիտի մոռցունել տանք վշտադին և արտասուաւէտ անցեալը։

Ժօրժ ծնրադրած էր Կապրիէլի առջեւ և անոր ձեռները սեղմելով կ'ըսէր.

—Իմ գորովս պիտի բաժնեմ ձեր և Մառի-Մատրլէնին միջեւ։ այնու մանաւանդ շատ պիտի սիրենք զձեզ զի մեծապէս տառապած եք, և այնքան երջանիկ պիտի ընենք զձեզ որքան դժբախտ եք եղած։

—Ա՛հ, զաւակներս, սիրելի որդիներս, պատասխանեց Սանտրիյեոն, անհուն գորովով անոնց երեսը նայելով, ձեր երջանկութիւնը պիտի ըլլայ իմս ալ։

Զեռքը տիկին Մելվիլին կարկառելով, յարեց.

—Մեծցուցիք աղջիկս, սիրեցիք, յաւէտ օրհնեալ եղէք, տիկին։

Յետոյ, մէկէնիմէկ տոքի ելնելով.

—Զարմն ժօրժ, աղջի՛կս, բան մը ունիմ ըսելու տիկին Մելվիլին զոր դուք պէտք չէ որ գիտնաք։

—Էյ ուրեմն, ըսաւ երիտասարդը, բռնելով իր նշանածին ձեռքէն, տակաւին քիչ մը ըլլա է, պտոյտ մը ընենք պարտէզը։

Դուրս ելան։

—Տիկին, ըսաւ Կապրիէլ տաքութեամբ, գիտէք թէ երկու թշուառականներ՝ կին մը և մարդ մը ուզեցին առեւանգել Մառի-Մատրլէնը։

—Այո, յե՞տոյ։

—Կինն ալ մարդն ալ ճանչցայ։ կինը՝ ձեր նախկին բարեկամուհին՝ Արմանտն էր։

—Եւ մարդը՝ կապո՞ն տը Մելվի՞լն է, գոչեց խեղճ կինը՝ տենդային յուզումով։

—Այո, տիկին։

—Բայց, ապահո՞վ էք, Կապրիէլ, շատ ապահո՞վ էք։

—Բացարձակ ապահով, տիկին։

—Օ՜հ, թշուառականները, թշուառականնե՜ր, հեծեց Տիկ. Մելվիլ։

Եւ մինչ համակ տենդասարսուռ՝ դէմքը ձեռաց մէջ կը պահէր, Կապրիէլ պատմեց ինչ որ անցած դարձած էր իր ներկայութեան քաղաքապետութեան սրահին մէջ ուր փոխադրուած էր վիրաւորը։

—Սոսկալի... ահռելի բան է, ըսաւ տիկին Մելվիլ գրեթէ նուաղեալ ձայնով։

Ոտքի ելաւ և տենդոտ քայլերով սկսաւ ճեմել։

Իր ամուսինն ու Արմանտն էին որ փորձած էին առեւանգել Մառի-Մատրլէնը։ Ա՛հ, կը հակնար հիմա։ ալ գաղտնիք չի կար։ տը Մելվիլ հասկցած էր թէ ինք որչափ սիրով կապուած էր մանկամարդ աղջկան հետ զոր մեծցուցած, որդեգրած էր, և թշուառականը, իր արժանաւոր ընկերուհիին հետ, համախոհութեամբ, ուզած էր ձեռք անցունել Մառի-Մատրլէնը, ստակ կորզելու միջոց մը ընելու համար դայն։ Բայց գիտէ՞ր թէ վարժուհին իր և Կապրիէլ Անկլատի աղջիկն էր։ Այո, գուցէ։ Եւ բան մը չէր կասեցուցած դայն։

Բայց որչափ ալ ոճրագործ ըլլար տը Մելվիլ, իր ամուսինն էր, Բօլ Մելվիլի հայրը, և հակառակ այն սոսկումին ու զզուանքին զոր այս մարդ կազդէր իրեն, խորին կարեկցութիւն մը կ'ազդէր իր սիրտին։

Այս վայրկենին տիկին Մելվիլ այն աքանչելի կինը կը ներկայանար որպէս եղած է միշտ։

Եթէ իր ամուսինն մահացու կերպով վիրաւորուած էր, իր պարտքը չէ՞ր գըտնուիլ անոր սնարին քով։ Անիկա նախատած և վռնտած էր քահանան։ բայց եթէ ինք գտնուէր անոր մօտ, թշուառականը լաւագոյն զգացումներու չ՞պիտի դառնար։ Եւ եթէ ապաշաւէր, իր ներողութիւնն հայցէր, իրեն չէ՞ր իսնար շնորհել զայն։ Ցոյժ վարանում, ի՞նչ ընելիքին վրայ կը մտածէր։ Ցանկարծ կեցաւ Կապրիէլի առջեւ։

—Դիտէ՞ք, Պ. տը Մելվիլ փանգաւո՞ր կերպով վիրաւորուած է, հարցուց։

—Մահացու կերպով, տիկին։ բժիշկն ըսաւ թէ գիշերը չի հանէր։

Տիկին Մելվիլ ա՛յ շվարանեցաւ։

—Կապրիէլ, գոչեց, ամուսինիս քով պիտի տանիք զիս։

Մառի-Մատրլէնին մայրը խոնարհեցաւ ի նշան հաւանութեան։ Տիկին Մելվիլի հրամանով, ծառայ մը կանչեց երկու նշանածները։

—Մօվեր պիտի երթանք, Կապրիէլ և ես, ըսաւ անոնց տիկին Մելվիլ։ բայց բնաւ մի՛ դադրցուցէք զիս, չենք կրնար պատասխանել։

—Շատ լաւ, տիկին, պատասխանեց ժօրժ, ոչ նուազ զարմացած քան մանկամարդ աղջիկը, բայց գիշերը վրայ հասած է և չէք կրնար հետիոտն Մօվեր երթալ։ ձի մը յծել տամ վիքթորիան։

Կէս ժամ ետքը, տիկին Մելվիլ և Կապրիէլ կառքէն կ'իջնէին Մօվերի քաղաքատունին առջեւ։ Քառասունի չափ անձեր կը գտնուէին հոն, վիճաբանելով, շատախօսելով, չարժակելով, իւրաքանչիւրն իր ուղեղին համեմատ կարծիք յայտնելով եղերական դէպքին վրայ։

—Սանտրիյեոնն է, ըսին քանի մը ձայներ։

Եւ ամբոխը տեղ բացաւ ճամբայ տալու համար երկու կիներուն։

Առաջին սրահին մէջ ուր մտան, երկու մարդեր նստած կը ծխէին իրենց ծխափողերը։

—Տես, Սանտրիյոն է, ըսաւ մին։ ի՞նչ կը վարազիր։

—Մոռցած մէկ բանս առնելու կուգամ այն սենեակէն ուր կը գտնուի վիրաւորը, պատասխանեց Կապրիէլ։

—Ա՛հ, ադէկ, կրնաք ներս մտնել։

Սրահ մտան որ կը լուսաւորուէր անկողնոյն քով գտնուող սեղանին վրայ դրուած լամպարով մը։ կին մը, պառաւ բարեպաշտուհի մը, առաջադրած էր գիշերն անցունել հոգեվարին քով։ Ընդունած էին առաջարկը, և պառաւը եկած էր իր պաշտօնը կատարելու։ Անկիւն մը նստելով, կարդացած էր իրիկուան աղօթքը, կոյսին և սրբոց երեմիականները, ապաշաւի սաղմոսներն, յետոյ գիրքն խնկած էր ձեռներէն և խորունկ քունով մը քնացած էր։ Զիմացաւ դուռին բացուիլն ու գոցուիլը։

Վիրաւորին աչուքները բաց էին։ անոնց մոլորահայեցութիւնը կրնար սոսկալի տեսիլներու վերագրուիլ։ շնչառութիւնը կարճ էր, անկանոն, մերթ տկար, մերթ աղմկալից։

Տիկին Մելվիլ անոր մօտեցած էր, որ ճանչցաւ զնա, վասնզի մթին փայլ մը անցաւ ակնարկին և ետ նետուելու պէս չարժում մը ըրաւ։ Տիկին Մելվիլ մեղմով խոնարհեցաւ, յետոյ ծունր իջաւ։ Այս պահուն, իր հոգեին բոլոր բարութիւնը կը ցոլանար դէմքին վրայ որ խորապէս տխրացած էր։

—Կասթոն, ըսաւ քաղցրութեամբ, կը մոռնամ անցեալը։ կուգամ պաղատիլ ձեզ որ ձեր սիրտը բանաք զս՛զման, և, եթէ կ'ուզէք, ներելու կուգամ ձեզ։

Տը Մելվիլ ուզեց քրքիջ մը արձակել, բայց ակռաները միայն կրցաւ կճրտել։ մարմինը ջղաձգաբար յուզուեցաւ և ամբողջ դէմքն անողոք տառապութեան և միանգամայն վայրագ արտայայտութիւն մը առաւ։ Ուռնեցած բովանդակ ուժը ժողվեց և գերագոյն ճիգ մը ընելով, ելաւ և կրցաւ իր կարկամած բազուկներուն կրծիկը։ Այն ատեն, կնոջը վրայ սեւեռելով իր բոցարձակ ակնարկը, խուլ ձայնով գոչեց.

(Շարունակելի)

ազգային նուաստութեան մը (գեսպանի մը մերժուելուն) չհամակերպելու համար։

Բայց ասի, կ'ըսեն Ֆրանսական Հրագիրը, քանի որ 1870ին Ֆրանսան չէ՞ եղեր պատերազմ գրգռողն, ի՞նչ արժէր կ'ունենան նոյն թուականէն ի վեր գերմանն քաղաքագիտաց և լրագրաց անդադար յայտարարութիւնք որով Ֆրանսան կը նկատեն միջազգային խաղաղութիւնը վտանգող տարր մը։

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԲԱԲԲԻՎԻ ԿՈՄՍԻ

1870 Ցուլիս 1/13է Պիտերսպուրգ Հեռագիրը (*)

Երէկ իրիկուն առնուած հեռագիր մը Ռայխսթակի Նոյմ. 11/23ի նստոյն մէջ նախարարապետ Գաբբրիվի կոմսին ի պաշտպանութիւն զինուորական օրէնքի արտասանած բանախօսութեան բովանդակութիւնը կը հաղորդէ հետեւեալ կերպով։

Գաբբրիվի յիշեցուց թէ Գերմանիա բնաւ պատերազմ չպիտի գրգռէ։ Կարդաց պաշտօնական ընագիրն այն հեռագրոյ զոր 1870 յուլիս 13ին Պ. Ապէքէն, Բրուսիոյ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչն յէմս Վիլհէլմ թագաւորի մօտ, ուղղած էր արտաքին գործոց նախարարութեան (Պիզմարք իշխանին)։ Այս հեռագրէ կ'երեւի թէ, 1870 յուլիս ամսուն Պիզմարք իշխանի կողմէ հրատարակեալ հեռագրին հակիրճատ, Վիլհէլմ թագաւոր, Պ. Պ. Ապէքէնի և Էօյլէնպուրկի խորհրդով, որոշած էր այլ եւս չընդունիլ Ֆրանսական դեսպան կոմս Պէնէդէտիի, որ յոյժ ձանձրացուցիչ ընթացք մը կը բռնէր։ (Տե՛ս այս աւուր առաջին Քաղաքականը։)

Գաբբրիվի յարեց թէ Ֆրանսա նիրհակցութիւններ կը փնտռէ, Եւրոպայ քարտէսը վերաքննելու (գնկլաս-Լոռէն իւր ձեռքն անցուելու) համար։ Գաբբրիվի կը գովէ Զարին խաղաղասիրութիւնը, բայց ցոյց կուտայ հակադրման հնանքն որ կայ Ռուսիոյ մէջ։ Ֆրանսայի և Ռուսիոյ միջեւ ուներկայելի կերպիւ յառաջ եկած մերձեցման առթիւ, անկարելի է որ Գերմանիա ետ կենայ իւր յարաբերութիւններէն Աւստրիոյ-Հունգարիոյ հետ։ Պէտք է աչքի առջեւ ունենայ պատերազմ երկու կողմէ միանգամայն, պատերազմ որուն դէմ դնել կարելի չէ։ Գերման կառավարութիւնը մտադիր է զինուորագրութիւնը շատցնել եւ զինուորական ծառայութեան պայմանամն երեք տարիէն երկուքի իջեցնել, եռամեայ տեւողութիւնը պահելով միայն հեծելազօրաց և թնդանօթաձիգ զօրաց համար, որք աւելի երկարատեւ վարժութեան կը կարօտին։ Ազգին վրայ դրուելիք բեռներն անտանելի չեն։ Ազգին համար ամենամեծ աղէտը կ'ըլլայ նոր պատերազմի մէջ յաղթուիլը։ (Ծափահարութիւնք։)

Զինուորական ծրագրոյ վիճաքանութեան շարունակումն յաջորդ նստին թողուցեաւ։

Այս ծրագրով, 1893 Հոկտ. 1էն մինչեւ 1899 մարտ 31, խաղաղութեան ժամանակ Գերմանիոյ մնայուն բանակի զօրաց թիւը կը սահմանուի 492,068 հոգի, հետեւակազօրքն երկու տարի միայն ծառայելու պայմանաւ։

ԲԱՆԱՄԱՑԻ խնդրոյն վրայ նոր հեռագիր մը կը ծանուցանէ թէ խորհրդարանական քննիչ յանձնաժողովոյ պահպանողական անդամք եւս ընդունած են իրենց պաշտօն։

ԲԱՆԱՄԱ Ի ԳԵՐՄԱՆԻԱ.— Ֆրանսական կառավարութեան կողմէ Պ. ու Լէսէբսի և իւր գործակցաց դէմ բացուած դատը դիւանագիտական ակմբոյ մէջ եւս կաքաւութիւն կը տանայ, և այս առթիւ հետեւեալ գէպքը կը պատմուի։ 1886 դեկտ. 30ին, արտաքին գործոց նախարար Պ. ու Ֆրէսինէ պաշտօն յանձնեց Պ. ու Լէսէբսի՝ Պերլին երթալու և Ֆրանսական դեսպան և Սուէզի վարչական խորհրդոյն անդամ Պ. Հէրսլէթի յանձնելու Պատուոյ Լէգէոնի Բ. կարգի պատուանշանը։ Պ. ու Լէսէբս, «Մեծ Ֆրանսացին», Վիլհէլմ Կայսեր հրաւիրանաք Աբքունեաց մէջ հացկերոյթի մը ներկայ գտնուելէն յետոյ, Ֆրանսական դեսպանին առաջարկութեամբ իւր գրպանէն հանեց Բանամայի ապագայ ջրանցին յատակագիծը, զոր իւր բովանդակ երկայնութեամբ պարզեց Կայսեր աչաց առջեւ։ Այս թատերական տեսարան մեծապէս ազդեց ներկայից վրայ, որոյմէ ո՛չ մին մոռցաւ այս դէպք։ Եւ հիմակ, այն «Մեծ Ֆրանսացին», և այն մեծ յատակագիծ Փարիզի պատժական դատարանին առջեւ կը հանուի՞ն։

Ի ՄԱՏԵՐԻՏ, Փորթուկալի թագաւորն և թագուհին ցամաքութեան հանդիպի մը ներկայ գտնուեցան։ Տոմ Քարլոս վորթուկէզ թագաւորը պահ մը այնքան հանեցաւ ցամաքտիկՍպանիացւոյնճարտար չարժմանց որ իւր աբքայական փողկապը զարդարող ադամանդեայ գնդասեղն հանելով այն մարդուն նետեց իբրեւ նուէր։ Դեռ ժամանակ կ'ուզէ որ այս հարաւային ժողովրդոյ մէջէն անհետի ցամաքոյր։

ԻՏԱԼԻՈՅ կառավարութեան կեդրոնական վարչութեան մէջ այս պահուս 782 պաշտօնք թափուր կը մնան։ Գիտէ՞ք քանի հոգիք հետամուտ են այն պաշտօններուն.— Իբր քառասուն հազար անձինք, որ ըսել է առ մէն մի պաշտօն հինգ հարիւր թեկնածու։

ՀՆԻԿԱՍՏԱՆԻ Փոխարքայն և իւր տիկին այս օրերս մասնակցեցան փոդրսութեան մը, յորում 20 փիղեր սպանեցան։ Ահա ճշմարիտ որսորդութիւն։

(*)։ Տե՛ս այս աւուր Ա. երեսին մէջ։

ԲԱՆՏԱՑԻ մէջ կաթոլիկներն ըստ բաւականի ազատութիւն կը համարուին։ Ֆրանսական և անգլիական արիւնը խառնուած է իրենց մէջ, այնպէս ալ ֆրանսական և անգլիական ազատամտութիւնը։ Բայց Մոնրէալի երկու ազատական լրագրեր Պ. Մերսիէի և ընկերաց դէմ յիշուած գայթակղական գործերու մէջ կղերի մասնակցութեան վրայ զանազան բաներ գրած ըլլալով, տեղւոյն ամէն կաթոլիկ եկեղեցեաց մէջ արքեպիսկոպոսին մէկ կոնդակը կարդացուեցաւ, որով բացարձակ կը բանադրէ յիշեալ երկու լրագրերն, և հաւատացեալց կ'արգիլէ անոնց ընթերցումն, հակառակ պարագային մէջ անձնական բանադրանք սպառնալով ընթերցողաց։

ԱԶԳԱՅԻՆ

ԼՈՒՐԵՐ

ԴԵՐ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԻՃԱԿԸ

Ամեն Ս. Պատրիարք Հայրն՝ ընկերակցութեամբ Դեր Օրմանեան Սրբազանի և Արժ. Տ. Մկրտեան հօր՝ երէկ Ազգ. Հիւանդանոց երթալով այցելութիւն տուաւ Դեր. Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցի։ Հիւանդը այլ ևս կորուսած է իր որոշողութիւնը և չի ճանչնար իրեն մօտեցողները։ Նոյնպէս չէ կարող խօսիլ։

Երէկ Ս. Հաղորդութիւն տրուեցաւ Սրբազան հիւանդին որ օրհասական վիճակի մէջ կը գտնուի։

ԲԵՐԱՑԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆՔ

Անցեալ օր բերկրութեամբ ծանուցինք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է արտօնել վերաշինութիւն Բերայի Նարեկեան վարժարանին և Ս. Յարութիւն եկեղեցւոյն զոր Ազգ. Լսեան Եղբարք ստանձնած են ի նորոյ կառուցանել իրենց ծախիւք։ Ինչպէս յայտնի է, այս նոր շինութիւն տեղի պիտի ունենայ Ցունայ Զարիսն վարժարանին ճիշդ դիմացը, ուր Ազգն երկար ժամանակէ ի վեր խարխուլ շէնքերու շարք մը ունի։

Մեր տեղեկութեանց համեմատ, աղջկանց և մանչերու երկու վարժարաններ պիտի կառուցուին քառայարկ, երբամէ բոլորովին անջատ, միայն վերնայարկը միացուած ըլլալով, որ պիտի յարդարուի իբր մեծ հանդիսաարահ մը ուր պիտի կատարուին Բերայի կրթական հանդէսք։

Ամբողջ դեսնին տարածութիւնն է 50 կանգուն երես, 47 կանգուն խորութիւն, որ կ'ունէ 2350 կանգուն տարածութիւն։ Վարժարանները պիտի կառուցուին 1000 կանգունի վրայ։ Ս. Յարութեան եկեղեցին ալ՝ որ կամարակի բնատոհմիկ ձեւով պիտի կառուցուի, 200 կանգունի վրայ պիտի շինուի։ Դեսնին մնացեալ մասը պարտէզի պիտի վերածուի, որով պիտի շրջապատուին վարժարաններն ու եկեղեցին։ Ճակատը պիտի ըլլայ հոյակապ դուռ մը, ուստից ներս մտնելով վարժարանք պիտի երեւին եկեղեցւոյն երկու կողմերն, իրենց առանձին դուռներով, և եկեղեցին պիտի դտնուի մեծ դրան հանդէպ։ Ցատակագիծը շինուած է Եւրոպական գեղարուեստի նորակերտ ճարտարութեամբ, որով արդարապէս գնահատուած և հաստատուած է արդէն Բերայի Թաղային խնամակալութենէն և Ազգ. Կեդր. Վարչութենէն։ Բովանդակ շէնքը քարաւիր պիտի ըլլայ և շինութիւնը Մեծ Պահքին պիտի սկսի։ Այս երկու վարժարանք հանգիստ պիտի կրնան պարունակել 850 էն մինչեւ 900 աշակերտ։

* * *

Գալով Բանկայթիի գերեզմանատան Ս. Լուսաւորչեան վարժարանին, որուն քարուկիր նորոգութեան ձեռնարկուած էր Բերայի Թաղային խնամակալութեան կողմէ, գոհութեամբ կ'իմանանք թէ անոր ալ նորոգութիւնն ի մօտոյ ի գլուխ պիտի հասնի այն կերպով որ կարենայ պարունակել 200 աշակերտ, որք այժմ երեսի վրայ մնացած են և որք աղօթող պիտի ըլլան կրթասէր Վեհապետին արեւշատութեան համար։

Գեր. Աբրահամ Եպիսկոպոս Մամիկոնեան հրաւիրեալ է յառաջիկայ կիւրակէ, 15 Նոյեմբեր, Թաղիս Ս. Յովհաննէս եկեղեցւոյն մէջ Ս. Պատարագ մատուցանել ի հոգեւոր մխիթարութիւն բարեպաշտ ազգայնոց։ Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ

Ց. Յովհ. Եկեղեցւոյ Կէտիկ-Փաշայի

Ատենադպիր Ատենապետ

Ց. ԳՈՐԵԱՆ ԱՒԵՏԻՍ ԹՈՒՐԵԱՆ 338

12 Նոյեմբ. 92, Կէտիկ-Բաշա

Նոյեմբերի 1-ին, կիրակի օրը, հանդիսաւոր կերպով բացուեց Հայ կանանց ընկերութեան Կար ու Գործի ուսումնարանին կից հիմնուած Խոհարարական մասնաբաժինը, ուր դասախօսութիւնները սկսում են Նոյեմբերի 3էց։

(Նոր-Դար)

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Երէկ, Ազգ. Պատրիարքարանի մէջ տեղի ունեցաւ Եղուարդ Էֆ. Թագուորեանի նշանախօսութիւն ընդ Ազն. Օրիորդ Էպրուհի Սիսլեան, ի ներկայութեան երկու կողմանց ազգականաց և բարեկամաց։

Թիֆլիզէն՝ Արժ. Դիւա քահանայ մեզ ուղարկած է հետեւեալ ցայտարարութիւնն՝ իր հրատարակելիք մէկ երկասիրութեան նկատմամբ։

Պատրաստելով հրատարակութեան համար մի ընդարձակ գրուածք

ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՒՂԻՆՈՍ

վերնագրով՝ ներկայիս հաղորդում եմ հասարակութեան, թէ՝

Գիրքը կը տպագրուի երկ-էջ, մեծ դիրքով, ընտիր թղթի վերայ և գեղեցիկ արտադրութեամբ։

Գիրքը բաղկացած կը լինի 6—800 երեսից։

Եթէ միջոցները ներեն՝ գիրքը կը զարդարուի անհրաժեշտ նկարներով և պատկերներով։

Թէպէտեւ այդ գործի տպագրութեան համար ծախք է պահանջւում մօտ 1200 ռուբլի, սակայն մամուլի տակ կը մնի՝ հէնց որ բաժանորդների թիւը 100-ի հասած կը լինի։

Իւրաքանչիւր օրինակի գինն է 5 ռուբլի։

Դիմել։—Տփխիս, կենտրոնական գրավաճառանոց, կամ ուղղակի ինձ։

ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆՑ

Գրքի բովանդակութիւնը

Ա. Սիմէօն կաթուղիկոսի կենսագրութիւնը

Բ. Բնագիրը։

Վերջին Լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.— Քաղաքապետութեան իրաւասութեանն ենթարկեալ կէյպզէ գաւառակի գայմագամ անուանեցաւ Խալիմ էֆէնտի, գայմագամ Մեվլէվէի։

Արշիպեղագոսի կղզեաց Մեվլէվէ գաւառակին գայմագամ անուանեցաւ Մէհմէտ Խալիտ պէյ, գայմագամ Կէյպզէի։

Մանասդիրի Գօլենիա գաւառակին գայմագամ անուանեցաւ Հասան Բիղա էֆէնտի, գայմագամ Մեճիտիյէի։

Էնկիւրիի Մեճիտիյէ գաւառակին գայմագամ անուանեցաւ Ահմէտ Լութֆի էֆէնտի, գայմագամ Գօլենիաի։

ՊՈՒՐԲԻՆԻ օսմանեան նորընտիր դեսպան Շէմսէտտին պէյ երէկ կայսերական պալատ գնաց և իրեն յանձնուած պաշտօնին համար շնորհակալութիւն մատուցանելով արժանացաւ կայս. մեծարանաց։

Ռիժիի գործոց համար կազմեալ յանձնաժողովն երէկ ի նիստ գումարուեցաւ։ Ընդ նախագահութեամբ Ելմտական նախարար Վեսմ. Նազիֆ էֆէնտիի։ Յանձնաժողովն աւարտեց իւր խորհրդակցութիւններն, որոց արդիւնքը պիտի տեղեկացուի ձեռնհաս իշխանութեան։

ԴՈՍԱԿԱՆ նախարարութիւնն որոշած է Սկիւտարի մէջ պատժական երկրորդ դասարան մը հաստատել, որուն համար ինը հազար ղրուշի ծախսից գումար մը որոշուած է։

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ Մնուտկին կողմէ վագի կալուածոց փոխարէն փոխատուութիւն ընելու խնդրոյն վերաբերեալ ծրագիրը, Նախարարաց Խորհրդոյ կողմէ քննուելէ յետոյ, մատուցուած էր Վեհ. Սուլթանին։ Արդ, Ն. Կ. Վեհափառութիւն հրամայած է յատուկ յանձնաժողով մը կազմել առ այդ մանրամասն քննութիւններ կատարելու և սահմանելու համար՝ փոխ տրուելիք գումարներու փոխարէն հարկ եղած ապահովութիւնները։

ՀՆՏԱԽՏ.— Առողջապահական վարչութիւնը հնտախտի դէպքերու վրայ հետեւեալ տեղեկութիւնները հաղորդած է կայս. պալատն առաջին քարտուղարութեան։

Թուական	դէպք	մահ	տեղ
Նոյմ. 4էն 10	400	170	Սինճան
» » »	250	85	Շիրաղ
» » »	200	70	Մագէնտրանի նահանգ
» » »	120	40	Սպահան
» » »	60	25	Սելոոս
» » »	50	20	Սաուճպուլաք
» » »	40	15	Սիսթան
» » 11	9	6	Տրապիզոն
» » »	—	—	Կարին
» » »	24	14	Երզնկա(գինուորներէն)
» » »	2	1	Խալիթան
» » »	1	3	Դերջան
» » »	2	1	Բաբերդ
» » »	5	9	Ալաչիրտ
» » »	3	2	Մալազկերտ
» » »	7	4	Վան

—Ի Տրապիզոն, Նոյեմբեր 11ի երեկոյէն մինչև 12, 4 դէպք եւ հին ու նոր բռնուածներէն 5 մահ։ Նահանգին միւս կողմերուն մէջ հանրային առողջութիւնը գոհացուցիչ է։

—Ի Թէհրան, ի Դաւրէժ եւ ի Թաւրիզ՝ հնտախտը բոլորովին անհետացած է։

—Պելգրատի օսմանեան դեսպանն հեռագրած է թէ Նոյեմբեր 9ին Դանուբի վրայ գտնուած Սիլիսթրիա նահանգին մէջ գործաւորներէ հինգ մարդեր հնտախտէ վարակուելով մին մեռեր է և սաստիկ վրայ հիւանդներն յաբարբերութիւններէ զրկուեր են։

ԿԱՄՈՒՐՋԻՆ ԱՐԿԱԾԸ

Աւասիկ Նորագոյն մանրամասնութիւններ՝ չորեքշաբթի գիշեր Գարաքէօյի կամուրջին վրայ պատահած ահռելի արկածի մասին։

